ԳԻՏՆԱԿԱՆԻ ԿԵՍԴԱՐՅԱ ՈՒՂԻՆ

Հայաստանի գիտական հասարակայնությունը նշեց հիշարժան հոբելյան: Լրացավ մեր ժամանակների անվանի պատմաբան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի ծննդյան 50-ամյակը:

Լայն է Ա. Մելքոնյանի գիտական հետաքրքրությունների և նախասիրությունների շրջանակը: Տարիներ և տասնամյակներ շարունակ նա զբաղվել է Հայաստանի պատմական ժողովրդագրության, Ջավախքի պատմության, հայ-վրացական հարաբերությունների, Հայկական հարցի և հայոց ցեղասպանության հիմնահարցերի զանազան շերտերի ու ենթաշերտերի ուսումնասիրությամբ:

Արգասաբեր է Աշոտ Մելքոնյանի կեսդարյա ուղին: Ծնվել է 1961 թ. փետրվարի 16-ին Ախալքալաքում, վաստակաշատ լրագրող և հանրային գործիչ Աղասի Մելքոնյանի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում, 1977 թ. ոսկե մեդալով ավարտել է Ախալքալաքի Դ. Դեմիրճյանի անվան հանրակրթական օջախը: Նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ և գերազանցության դիպլոմով ավարտել 1982-ին: 1982-1985 թթ. ուսումնառությունը շարունակել է ԵՊՀ ասպիրանտուրայում՝ որպես վերոնշյալ բուհի հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ: 1986-ից աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում նախ՝ որպես լաբորանտ, ապա՝ գիտաշխատող, գիտական քարտուղար և գիտական հարցերի գծով փոխտնօրեն:

Ա. Մելքոնյանը 1989-ին հաջողությամբ պաշտպանում է ատենախոսություն՝ «Էրզրումի նահանգի հայ ազգաբնակչությունը 19-րդ դարի առաջին երեսնամյակին» թեմայով, և ստանում պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Նա հաջողությամբ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» թեմայով: Նույն թվականին Ա. Մելքոնյանը զբաղեցնում է ՀՀ ԳԱԱ

պատմության ինստիտուտի տնօրենի պաշտոնը, իսկ երկու տարի անց՝ 2004 թ., նրան շնորհվում է պրոֆեսորի գիտական կոչում: 2006 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ:

Հանրաճանաչ գիտնականն առ այսօր հրապարակել է տասնմեկ գիտական ուսումնասիրություններ ու գրքեր, ավելի քան 150 գիտական հոդվածներ, որոնք լույս են տեսել Հայաստանում և նրա սահմաններից դուրս՝ Ռուսաստանում, Անգլիայում, Հունգարիայում, Ֆրանսիայում, Եգիպտոսում, ԱՄՆ-ում, Լիբանանում, Իրանում, Արգենտինայում, Վրաստանում՝ հայերեն, անգլերեն, հունգարերեն, ֆրանսերեն, վրացերեն, իսպաներեն, պարսկերեն թուրքերեն, արաբերեն լեզուներով: 1990-ական թթ. վերջերից մինչև օրս Ա. Մելքոնյանը ուշագրավ զեկուցումներով հանդես է եկել միջազգային բազմաթիվ գիտաժողովներում, ներառյալ՝ Գերմանիայում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Ֆրանսիայում, Եգիպտոսում, Իրանում, Հունգարիայում, Կիպրոսում, Լիբանանում և այլուր:

Ա. Մելքոնյանը բանախոսություններով ու ելույթներով հանդես է եկել արտերկրի բազմաթիվ քաղաքներում՝ ինչպես սփյուռքահայ, այնպես էլ օտարազգի լսարանների առջև: Նա, գիտական բազմազբաղ աշխատանքին զուգահեռ, վարել է նաև մանկավարժական ակտիվ ու եռանդուն գործունեություն. «Հայոց պատմություն» առարկան դասավանդում է ԵՊՀ-ում, ԳԱԱ մագիստրատուրայում, ժամանակին դասավանդել է նաև մի շարք այլ բուհերում: 2004 թ. հունիսից մինչև 2006 թ. դեկտեմբեր համատեղության կարգով զբաղեցրել է Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հասարակական գիտությունների ամբիոնի վարիչի պաշտոնը: Բազմիցս եղել է տարբեր բուհերի, այդ թվում՝ Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական, Արցախի պետական համալսարանների, Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետների պետական քննական հանձնաժողովների նախագահ:

Ներկայումս պրոֆեսոր Ա. Մելքոնյանը գլխավորում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական և նույն ինստիտուտում գործող «004 Հայոց պատմություն» մասնագիտական խորհուրդները, միաժամանակ ԵՊՀ խորհրդի, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի, Երևան քաղաքի պատմության թանգարանի գիտական խորհուրդների և մի շարք գիտական հանդեսների («Լրաբեր հասարակական գիտությունների», «Բանբեր Հայաստանի արխիվների», «Վեմ», «Կանթեղ», «Տարեգիրք» և այլն) խմբագրական խորհուրդների անդամ է: Խորագիտակ գիտնականը ոչ միայն մեր պատմական բնօրրանի հայոց դարավոր պատմության հերոսական ու ողբերգական էջերի անաչառ գիտական ուսումնասիրությանն է լծված, այլև հանրագիտարանային ու հրապարակախոսական հոդվածների, դպրոցական ու բուհական ձեռնարկների միջոցով այն հանրամատչելի կերպով ներկայացնում է հայրենի և արտերկրի լայն հասարակայնությանն ու հատկապես պատանի ու երիտասարդ սերնդին: Այս առումով նրա հետազոտական աշխատանքների աշխարհագրությունն ընդգրկում է գրեթե ամբողջ պատմական Հայաստանը:

Ա. Մելքոնյանը, 2010 թ. սկսած, ՀՀ պաշտպանության նախարարության հետ համագործակցության շնորհիվ, հայոց պատմության հիմնահարցերի շուրջ ուշագրավ դասախոսությունների շարք է իրականացնում հայկական բանակում՝ ճշմարիտ հայրենագիտությամբ լիցքավորելով հայ սպաներին ու զինվորներին:

Չի կարելի շրջանցել նրա հետևողական պայքարը պատմության թուրք ու թուրքամետ կեղծարարների դեմ: Հատկապես հիմնավոր էր գիտնականի սկզբունքային և իրատեսական դիրքորոշումը հայոց ցեղասպանության ուրացման երևույթի դեմ՝ որտեղ, ինչ ձևով և ում կողմից էլ այն արտահայտված լիներ:

Այդ նպատակին նա ծառայեցնում է ամեն ինչ՝ գիտական ներուժն ու հասարակական-քաղաքական բազմաբովանդակ գործունեությունը, սեփական հետազոտական աշխատանքն ու գիտակազմակերպչական լայն շառավղի իր առօրյան: Նշանավոր պատմաբանի աշխատությունները ձեռք են բերել հասարակական մեծ հնչեղություն և արժանացել տարբեր կարգի մրցանակների: Նրա «Էրզրում» (Ե., 1994 թ.) պատմաժողովրդագրական ուսումնասիրությունը և Արևմտյան Հայաստանի գավառներին ու բնակավայրերին նվիրված 30 հոդվածներն արժանացել են «Հայաստան» համահայկական հիմնադրամի գլխավոր մրցանակին, իսկ «Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին քառորդին» (Ե., 2003 թ.) աշխատությունը՝ նշանավոր արևելագետ և ազգային-հասարակական գործիչ Գուրգեն Մելիքյանի հիմնադրած «Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներ» հիմնադրամի դրամաշնորհին, նաև «Թեքեյան» մշակութային միության «Հայկաշեն Ուզունյան» մրցանակին:

Ա. Մելքոնյանի հեղինակությամբ լույս տեսավ «Նյութեր Ախալցխայի ու Ախալքալակի դպրոցների պատմությունից (19-րդ դար – 20-րդ դարի սկիզբ)» (Ե., 2005 թ.) աշխատությունը: Վլ. Ղազախեցյանի համահեղի-նակությամբ նա կազմել ու խմբագրել է «Հայաստանը պետական գաղտնի փաստաթղթերում (1922-1929 թթ.)» (Ե., 2008 թ.) ժողովածուն: Նրա և Էդ. Դանիելյանի համահեղինակությամբ, դասական ուղղագրությամբ, 2008 թ. լույս տեսավ «Հայոց պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը» ուսումնական ձեռնարկը:

Հայ պատմաբան Ա. Մելքոնյանի գիտահասարակական գործունեության կարևոր կողմերից են հայոց պատմական բնօրրանին՝ Արևմտահայաստանին նվիրված ուխտագնացությունները, դրանց խոր իմաստավորմամբ ծնված ֆիլմերն ու ճանապարհորդական նոթերը: Նա յոթ անգամ ուխտագնացություն է կատարել Արևմտյան Հայաստան և հայրենասեր գիտնականի, հմուտ տեղագրագետի, քարտեզագրի, պատմագրաաշխարհագետի մասնագիտական իմացությամբ շրջել է հայոց հազարամյա հայրենիքի անհետացած ու դեռ կանգուն գյուղերով և քաղաքներով, ակնածանքով ուսումնասիրել հայոց պատմական անցյալի հուշարձաններն ու հիշատակարանները: Մեր պատմական հայրենիքն իր անցյալի էջերով ու ներկայով արտացոլված է Ա. Մելքոնյանի հեղինակած «Կարոտի էրգիր» (2006 թ.), «Արարատ. Հայոց անմահության խորհուրդը» (2008 թ.) հեռուստատեսային վավերագրական ֆիլմերում: Խորհրդանշական է այն հանգամանքը, որ Սևրի պայմանագրի կնքման օրը՝ օգոստոսի 10-ին (2007 թ.), նա լեռնագնացների խմբով նվաճել է Արարատ լեռան գագաթը:

Միանգամայն արդարացի և օրինաչափ է, որ գիտամանկավարժական, հասարակական եռանդուն, ազգօգուտ գործունեության համար ականավոր գիտնականն արժանացել է մի շարք բարձր պարգևների ու մեդալների: ՀՀ Նախագահի հրամանագրով 2003 թ. պարգևատրվել է «Մովսես Խորենացի» բարձրագույն մեդալով: 2005 թ. հայոց ցեղասպանության 90-րդ տարելիցի միջոցառումներին ակտիվորեն մասնակցելու համար պարգևատրվել է ՀՀ վարչապետի և «Մանկավարժական համալսարան» հուշամեդալներով: Վերջերս նրան շնորհվեց նաև ՀՀ պաշտպանության նախարարության ոսկե մեդալ: Ա. Մելքոնյանի բարոյականային և հայրենասիրական բարձր հատկանիշների շնորհիվ է, որ հանրապետության պատմագիտական գլխավոր հիմնարկում՝ ԳԱԱ պատմության ինստիտուտում, տիրում է բարոյահոգեբանական միանգամայն առողջ ու ստեղծարար

մթնոլորտ, որ համագործակցության առողջ հիմքեր է ստեղծել հայ պատմաբանների համար՝ թե հայրենիքում, թե արտերկրում:

Ա. Մելքոնյանի գիտական, մանկավարժական, հասարակական-լուսավորական գործունեության մասին բարձր կարծիք են հայտնել հայազգի և օտարազգի բազմաթիվ գիտնականներ, պատմաբաններ, հասարակագետ-քաղաքագետներ, լրագրողներ ու խմբագիրներ, պետական ու հասարակական գործիչներ:

Անվանի գիտնական և հայրենանվեր մտավորական Աշոտ Մելքոնյանը ստեղծագործական ուժերի բուռն ծաղկման ու վերելքի շրջանում է, ուստի նրան մաղթենք աշխատանքային հաջողություններ, գիտական, կազմակերպչական, ստեղծագործական անդադրում ջանքեր ու որոնումներ՝ ի հաստատումն Հայաստան երկրի և հայ ժողովրդի:

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ Ա. Հ.
Պատմական գիտությունների թեկնածու